



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2016

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ԲԱՆ ԽԲ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

**Տ**էր Աստուած գթութեան, փրկութեան, եւ ողորմութեան,  
 փառութեան եւ նորոգութեան,  
 բժշկութեան եւ առողջութեան,  
 լուսաւորութեան եւ կենդանութեան,  
 բարութեան եւ անմահութեան,  
 յիշէ զիս երբ գաս Գու թագաւորութեամբդ,  
 Ահաւոր, Հօր, Բարերար եւ Ամենաստեղծ,  
 Կենդանի, Գովեալ, Ամենակատար,  
 որ մերձ ես բոլոր արարածներուն հառաչանքին:  
 Օրհնեալ, օրհնեալ, դարձեալ օրհնեալ.  
 զիս ալ ընդունէ նոյն հաւատով  
 ու կործանումէս կանգնեցուր զիս, ով Բարերար:  
 Կամեցիր, Տէր, ու պիտի փրկուիմ.  
 ակնարկէ, ու պիտի արդարանամ.  
 ըսէ, ու անմիջապէս պիտի սրբուիմ.  
 ամէն բանի մէջ փառաւորուած ես Դուն յաւիտեանս. ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
 աջ քո հոշանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
 ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ 2:8-17



## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

«**Իմ սիրականիս ձայնն է**» (8 հմր): Հեղափոխական արտայայտություն մըն է, որ արդէն ցոյց կու տայ, թէ հարսը կը ճանչնա իր սիրականին ձայնը: Այնպէս ինչպէս երեխաները կը ճանչնան իրենց հօր ու մոր ձայնը երբ փուն կը վերադառնայ: Նոյն այդ ձայնը Ադամ ինք եւս լսեց Դրախարի պարտեզին մէջ: Նախապէս ալ կը լսեր, բայց այս անգամ լսելէ յետոյ ուզեց պահուիլ: Հարսը նաեւ կ'ուզէ որ ուրիշներ ալ լսեն այդ ձայնը, ճանչնան եւ ընդունին: Անոր ձայնը լսել նաեւ կը նշանակէ Անոր բերած արդարութիւնը, փրկութեան ձայնը: Միւս կողմէ, մեր աղաչանքը ձայնը որքանով լսելի է Փեսային՝ Քրիստոսին, որպէսզի Ան ալ մեր ձայնը լսելով ողորմի մեզի: Տակաւին, կայ նաեւ կանուխէն ըսուած ու լսուած ձայնը, որ մարգարէները առաջուց ձայնեցին Փեսային գալուստը:

«**Անիկա լեռներուն եւ բլուրներուն վրայէն ցարկրտելով կու գայ**» (8 հմր): Լեռներն ու բլուրները Սաբանային, Չարին բռնութիւններն են, որոնց վրայէն ցարկրտելով կու գայ, որ կը նշանակէ զանոնք կոխկրտելով: Նախ ու մարգարէն պիտի ըսէ. «*Լեռները անկէ կը դողան ու բլուրները կը հային*» (1:5): Տակաւին, նոյն իշխանութիւնը փրուաւ Քրիստոս Իր աշակերտներուն, ըսելով. «Եթէ հաւատարմութեամբ այս լեռան որ ծով իյնայ, պիտի հնազանդի ձեզի» (Մտթ 17:20): Աշակերտներուն փրուած իշխանութիւնը լեռնացած մեղքերուն վրայ էր:

Հարսը կը սկսի պարկերացնել իր սիրականը՝ Փեսան, որ «**պարին երեւը կայներ է, պարուհաններէն կը նայի, վանդակներէն կ'երեւնայ**» (9 հմր): Հեղափոխական արտայայտություն մըն է, որու համար Գիրգոր Նարեկացին հետեւեալ բացատրութիւնը փրուած է ըսելով. «Պար բացարթութեան մէջ կը փեսնէ որպէս Կոյսին մարմինը: Պարուհանները՝ որպէս մարգարէները, որոնք մարգարէացան ու պարզամեցին Անոր գալուստը, իսկ վանդակները՝ նկարի ունի օրէնքները»: Կը նշանակէ Անոր աստուածութիւնը նախ օրէնքն ու մարգարէները աւերեցին, որմէ ետք յարմար ժամանակին ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ կոյսէն պիտի մարմնանար:

Ահա Փեսան կը ձայնէ ըսելով. «**Ելիր, ով սիրուհիս, ով գեղեցիկս ու եկուր**» (10 հմր): Նոյն այն կոչին, որ Քրիստոս պիտի ըսէ. «*Ինձի եկէք դուք բոլորդ, հոգնած եւ բեռնաւորուած եւ ես ձեզի հանգիստ պիտի տամ*» (Մտթ 11:28): Գեղեցիկ է, որովհետեւ աւագանի լուսցումով գեղեցկացաւ: Ադամին է, որովհետեւ Ս. Հոգիի շնորհները ստացաւ: Մերձաւոր է, որովհետեւ Փեսային՝ Քրիստոսի միացաւ:

«**Ահա ձմեռը անցաւ, անձրեւները անցան գացին**» (11 հմր): Չմեռը անցնիլ կը նշանակէ կռապաշտութիւնը, Սաբանային խաբէութիւնը, որ բարի կը ձեւացնէ ինքզինք, բայց խորքին մէջ կորստաբեր է: Ինչպէս ջրհեղեղի պարագային:

«**Ծաղիկները կ'երեւնան, յօրելու ժամանակը հասաւ, փայտակին ձայնը կը լսուի**» (12 հմր): Ինչպէս գարնան ծաղիկները կը սկսին, նոյնպէս ալ Քրիստոսով առաքինութեամբ եւ աստուածաշարժութեամբ զարդարուած արդարներուն բազմութիւնը, որպէս ծաղիկներ: Իսկ յօրելու ժամանակը, որ կը նշանակէ սուրբերուն մէջէն պիղծերը կտրելու եւ ներելու: Այնպէս ինչպէս գարնան թռչունները եւս կը սկսին երգելու, նոյնպէս ալ արդարները, առաքեալները, մարգարէները եւ անոնք որոնք կ'ընդունին Աւերարանի բարի լուրը հոգեւոր երգերով կ'օրհնաբանեն Տէրը:

Այգիները իրենց բերքը փոխն, թզենին իր պտուղը (13 հմր): Քրիստոս հաւատարացեալները անուանեց որպէս այգի ծաղկեցին փարբեր-փարբեր գոյներով, պտուղներով եւ հոտերով. մէկը՝ մարտիրոսութեամբ, ուրիշ մը՝ առաքինութիւններով, ուրիշ մը՝ բարեգործութեամբ: